

**«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍԻ ԷԹԻԿԱՅԻ
ԿԱՆՈՆՆԵՐԸ**

«Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդեսի (այսուհետ՝ հանդես) էթիկայի կանոնները կոչված են կարգավորելու հանդեսի խմբագրության ու հրատարակության ներկայացվող նյութերի հեղինակների հարաբերությունները, հանդեսում հրատարակության համար նյութերի ուղարկման, այդ նյութերի գրախոսման կամ երաշխավորության ձևերի և հրատարակության ընդունման հետ կապված հարցերը:

ԱՅԴՊԻՍՈՎ՝

1. Հանդեսի խմբագրությունը որոշակի պատասխանատվություն է կրում հանդեսում հրատարակվող նյութերի գիտականության, դրանցում բերված փաստերի հավաստիության, գիտական նորույթի առկայության և փոխառված մտքերի ու պնդումների (առկայության դեպքում) պարտադիր հղման համար:

2. Առաջին կետում նշված պարտավորության համաձայն՝ հանդեսի խմբագրությունը հստակեցնում է հրատարակման ներկայացվող նյութերի ուղարկման, գրախոսման կամ երաշխավորության և տպագրման կարգը, որով՝

2.1. հեղինակը հանդեսի «Ի գիտություն հեղինակների» բաժնի պայմաններին համապատասխան պատրաստված գիտական հոդվածը ուղարկում է հանդեսի պաշտոնական հասցեին (histcultjournal@gmail.com) կամ խմբագրություն ներկայացնում անձամբ [ԵՊՀ 6-րդ մասնաշենք (Սև շենք), 3-րդ հարկ, 319 սենյակ],

2.2. հանդեսի խմբագրությունը պարտավոր է ստացված հոդվածը ուղարկել գրախոսման (հոդվածից հանելով հեղինակի անունը) կամ երաշխավորության՝ բնագավառի մասնագետ կամ բնագավառին մոտ կանգնած գիտնականի,

2.3. գրախոսը կամ երաշխավորողը համապատասխանորեն վերնագրված (գրախոսություն կամ երաշխավորություն) կարծիքում ազատ շարադրանքով նշում է թեմայի ուսումնասիրության արդիականության, հոդվածի արժանիքների, առկա գիտական նորույթի, ինչպես նաև փոխառված մտքերի ու պնդումների (եթե կան) պարտադիր հղման մասին՝ վերջում արձանագրելով տպագրման անհրաժեշտությունը,

2.4. գրախոսի անունը չի հրապարակվում,

2.5. հանդեսի խմբագրությունը պատասխանատու է տպագրման ընդունված նյութերի պատշաճ խմբագրման (հեղինակների հետ համաձայնեցնելով) և սրբագրման համար:

3. Պատշաճ կերպով գրախոսված, դրական եզրակացության արժանացած և հրատարակության երաշխավորված հոդվածները ընդունվում են տպագրության հանդեսի խմբագրական խորհրդի նիստում՝ խմբագրի ներկայացմամբ և խմբագրական խորհրդի հավանությամբ: